

նադրեալ յօդուածում՝ սխալած եմք
Մեծ. Պատար Պ. Մամաջանեանցի ա-
նունը Մարգար գրելով, և այս ականջ
վրիպակի համար ներդամութիւն կը-
խնդրեմք:

ՍՈՒՐԶԱՆԳԱԿ ԲԻՔՉԱՆԳԵԱՆ.

ՍՈՒՈՑ ՍՈՎԵԼՈՑ ՀԱՄԱՐ.

Եսխանակ սովատանջ մերազնեայց ի
նպատո՝ ի Պօլիս կազմուած Եզգային նը-
պաստահաւաք Մասնաժողովոյ արդեսնեց
վերայ հետեւեալ տեղեկութիւնք կ'ըս-
ղեմք Փաշային:

Անցեալ շարթ աւուր թերթով ինչ ինչ ծա-
նօթութիւն տուինք՝ սովկոց մեծարգոյ մասնա-
ժողովոյ գործոց վրայ, խոստանալով հետզհետէ
ուրիշ տեղեկութիւններ ալ հրատարակել, ի գի-
տութիւն հասարակաց:

Մասնաժողովոյ միջոցաւ եղած ստորագրու-
թեանց դուժարը՝ 4440 լիւր 85 դշե հասած, և
4379 լիւր բաշխուած է՝ հետեւեալ կերպիւ.

1. 0-0.	
Կեսարիոյ քաղաքին և գիւղերէնց	1915
Գըրջէճիր, Եփեսոս, Պօր և լին	244
Եօզրատ քաղաքի և գիւղերէնց	1413
Գաղատիոյ և գիւղերէնց	515
Քօնեայի	100
Բանսիոյ	120
Եւզոկիոյ	80
Պանտըրմայի	50
Աթիօն — Քարահիսարի	100
Ղուրտպէէնէկի	75
Պիլէճիկու շրջակայից, Մուրատչայ	
Եսարձըզ և լին (յուդարեկելի)	200
Պօլիս գիւմըզ գաւառացի կարօտ ազ- գայնոց վճարք ծամբու ծախուց, և այլ պիսայից համար	47
Ապահովութեան սնտուկին	150

Ազգային Հիւանդանոցի հոն պատրաս-
տարձող սովարեկեաներու բաժնին հա-
մար

50

4379

Այս բաշխումը՝ յիշեալ գաւառները յատկա-
պէս կարգեալ յանձնաժողովոց միջոցաւ եղած
և մանրամասն տեղեկագրեր Պօլիս ղրկուած են:

Արեւակտքէ գիտմաք որ Եսեոյմէջ սովր գեո
կշարունակէ, ձմեռը սաստիկ է այս ասարիս և գոն-
թե ամեն ոք աղետալի տեղեկութիւններ կ'ըստիին
մասնաժողովոյն խորհրդարանը, Հետեւաբար հան-
գանակութիւնը շարունակել անհրաժեշտ է, և
մասնաժողովն արդէն անդուռ ու անձանձիր կշա-
րունակէ հանգանակութիւնը և ջանահար կլի-
նի հետզհետէ օգնութիւն հասցունել մեր տառա-
պեալ սովատանջ ազգայնոց:

Աներկմիտ եմք թէ մասնաժողովն ինչպէս մին-
չև ցարդ զթոտ ազգայնոց հնորհիւ յաջողեցաւ
իւր պաշտօնը յառաջ տանիլ, նոյնպէս և այսու-
հետեւ պիտի յաջողի՝ տառնց երբէք կարեորու-
թիւն տալու ոմանց այլ ընդ այլոց զրոյցներուն,
որ կամ անգիտութեան և կամ Հայրամտութեան
արգասիք են:

Աներկմիտ եմք նաև, որ մեր բարեգործով ազ-
գայինք ալ դարձեալ մտադիւր կուտան իրենց նը-
ւերները, որոնք բազմաթիւ մերայնոց փրկութեան
պատճառ պիտի ըլլան, եթէ գաւառներէն տը-
րուած նկարագրութիւններն հրատարակեմք, ո'չ
որ կրնայ անթաց աչք կարդալ և անտարբեր
գտնուիլ,

Փոլի, Թ. 968, Մարտ 8.

ՀԱՆԳԻՒՍՏ

ԹԱԴԷԼՈՍ Ս՝ ԱՐԲԵՊԻՍԿՈՍՈՍ.

Ամբոց (Մարտ 7) Ուրբաթ զիշիւր ժամ հորպիս
միջոցներն՝ Գերաշնորհ Տէր Թադէոս Արքեպիսկո-
պոս յիտ կարճատեւ հիւանդութեան վախճանեցաւ
ի հասակի 67 ամաց:

Հոգեւոր Արքեպիսկոպոսի Օծման եւ թաղման հան-
դէսն կատարեցաւ կիւրակէ օրն ի Ս. Հրեշտակապետ
Եկեղեցին Պալատու, եւ Բարեբրդու վիճակին Առաջ-
նորդ Գերաշնորհ Գրիգորիս Արքեպիսկոպոսն Ս. Պա-

տարադ մատոյց եւ հակիրճ ու ազդու ատենախօսութեամբ մը դուրս ելանքուցեալ Սրբազանին պարզ, անենեղ, ազգասէր եւ անյիշատիք բնաւորութիւնն, եւ Աստուածային ներադրութիւնն հալցեց ի հաշտութիւն ոյն թրակիոյ ազդայնոց համար, որ յանիրաւի անվայել կերպով վարուած էին Հանգուցելոյն հետ, նորա Առաջնորդութեան վերջին տարիներն:

Ս. Թժումն ըրաւ Բարձրաշնորհ Սրբազան Պատրիարք Հայրն, եւ թաղման հանդէսն խիստ փառաւոր շքով կատարեցաւ ի ներկայութեան բարձրատիւման եկեղեցական Ս. Հարց եւ 6—7 հազարի չափ ժողովրդեան: Հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ պահաւանի աջ կողմէն վերնատան սանդուխտն ներքեւ:

Հոգեւոյն Սրբազանն տանն տարւոյ չափ Պաշտօն Պատրիարքական մետրեքարի եւ փոխանորդի պաշտօն վարած է՝ Ս. Մատթէոս եւ Տ. Գալովքոս Սրբազան Պատրիարքաց օրովն: 24 տարի Առտոսիոյն առաջնորդութիւն ըրած եւ վերջին ատեններս Ազգային Երեսփոխանի եւ Կրօնական Ժողովոյ Առնապետութեան պաշտօն վարած էր, եւ այլ եւս խել մը կրօնական եւ ազգային պաշտօններ հաւատարմաբար կատարած էր՝ եւ իւր ծառայութիւններուն մէջ միշտ իրեն տեսակէտ ընտրած էր Հայաստանեայց Ս. Եկեղեցին եւ Հայոց Ազգը: Ինքն այն կարգի եկեղեցական մ'էր՝ որ իւր կեանքէն նախամեծար կընտրէր Եկեղեցւոյ փառքն եւ ազգին իրաւունքն, շահն ու պատիւը, ինչպէս՝ որ ասոր ալ մի մեծ տաղանցի ընծայեց Բերայի գերեզմանատան խնդրոյն մէջ, որ անվերջ սրտիւ Ազգին ծայնն բարձրացոյց մեր Օգոստոսիոս Կայսեր առաջ:

Պոսեցւոց նա մանաւանդ Պայատու Պատուարժան Համարակութեամբ մեծ փառք մ'է՝ որ յիշեալ բազմաշխատ Սրբազանն իր ծերութեան վերջին տարիներուն մէջ խնամեցին եւ մխիթարեցին:

ԼՅԻ. Թ. 20, Մարտ 15.

ՆԵՐՍԷՍ Ս. ՊԱՏՐԻԱՐԿԻ

ՏԻՐՍ. ՄՈՐ. Վ. Ա. Խ. Ճ. Ա. Ն. Է. Ե.

Բարձրաշնորհ Սրբազան Պատրիարք Հօր Առաքինազարդ Տիրամայրն՝ յետ երկարատեւ հիւանդութեան

ուրբաթ օրն (Մարտ 28) իւր մահկանացու կենաց ընթացքն կնքեց ի հասակի 57 ամաց, որոյ յուզարկաւորութեան հանդէսն շաբաթ օրն մեծաւ շքով կատարեցաւ ի Խաչակիւ ի ներկայութեան Հորից Սրբազան Եպիսկոպոսաց, 48 Վարդապետաց եւ բազում քահանայից եւ մէկ քանի հազար ժողովրդեան:

Այս տխուր հանդէսին նաեւ ներկայ էին Յունաց Գեր. Պատրիարքական Փոխանորդն՝ մի Էֆէնտիի հետ եւ Հրէից Բարունապետն:

Հանդէսն ակամ հանգուցելոյն բնակաւորանէն, եւ երբ Նուպար — Շահնազարեան վարժարանի առաջն հասաւ զազաղն, աշակերտներէն մին մի ճառ արտասանեց, յետ որոյ Եկեղեցի տարուելով Ս. Պատարագ մատոյց Արմաշու վանուց վանահայր Գեր. Տ. Խորէն Եպիսկոպոս Աշգեան, եւ սրտառուչ զամբանական խօսեցաւ Գեր. Տ. Խորէն Եպիսկոպոս Նար — Պէյ հանգուցելոյն առաքինի եւ երկիւղած կեանքն յիշատակելով եւ երկնային մխիթարութիւնն հայցելով նորա սգազգեաց գերդաստանին:

Յետ աւարտման Ս. Պատարագին՝ նոյն հանդիսիւ գերեզմանատուն տարուելով՝ իւր հարց տապանն ամփոփեցաւ հանգուցելոյն մարմինը:

Առաքինազարդ Տիրամայրն վարժապետեան այն բարեկիրթ, երկիւղած եւ զորովապոմ մայրերէն էր՝ որ ԱՍՏՈՒԱՆ եւ ԱԶԳ՝ այս երկու գերբնական բաւերն իրենց ի վական նշանակութեամբն իւր կամին հետ ջախջախէր իւր որդեաց, այն մայրերէն էր՝ որ կատարեալ Քրիստոնէի մը պատկերն իւր վերայ վրկրէր եւ առաւել իւր վարքովն օրինակ հանդիսացած էր ներշնչել իւր որդւոց պտին մէջ երկիւղածութեան, ճշմարիտ Աստուածապաշտութեան, առաքինութեան եւ անգրգայնութեան կենսատու տարրը, ի մի բան՝ այն մայրերէն էր՝ յիմէ ծնունդ առին Հանձարներ ու Հրաշքներ, յորոց մին՝ այն է՝ Տ. Տ. Ներսէս Սրբազան Արքեպիսկոպոս, ամբողջ Թուրքիոյ Հայոցն նորընտիր խնամող՝ Հովին եւ որդեւէր Հայրն եղած է՝ եւ որ արժանապէս ամբողջ ազգին սիրոյն եւ համարման արժանացած է իւր ծիրբերովն եւ խոհական տաղանդովն:

Այսպիսի մայրերու ծնունդ է, որ Ազգին կեանք կուտայ, եւ եթէ իրենք իսկ մեռանին՝ անմահ են նորա Ազգին կենաց մէջ իրենց Թողած կենդանի յիշա-